



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ԽԱՆՈՒՄՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ՅՈՂԵՖ ԱԼՈՒՉ ՇՈՒՄՊԵՏԵՐ.

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. ավստրիական դպրոց, Յ. Շումպետեր, Ֆ. Վիգեր, Յ. Բեմ-Բավերկ, Գ. Շմոլլեր, տնտեսական աճ և տնտեսական զարգացում, նորամուծություն

Յոզեֆ Ալոիզ Շումպետերը (1883-1950) հայտնի է որպես ավստրիական ծագմամբ ամերիկացի տնտեսագետ, քաղաքագետ, սոցիոլոգ, տնտեսական մտքի պատմաբան, իրավաբան: Ուսանել է Վիեննայի համալսարանում ավստրիական դպրոցի հիմնադիրներ Ֆ. Վիգերի, Օ. Բեմ-Բավերկի, Բեռլինում՝ Գ. Շմոլլերի մոտ, այնուհետև՝ Լոնդոնում: Արժեքավոր են Շումպետերի բոլոր ուսումնասիրությունները, հոդվածներն ու հրապարակումները, սակայն «Տնտեսական զարգացման տեսությունները» նրա գլխավոր, հիմնական աշխատությունն է:

Յոզեֆ Ալոիզ Շումպետերը (1883-1950) հայտնի է որպես ավստրիական ծագմամբ ամերիկացի տնտեսագետ, քաղաքագետ, սոցիոլոգ, տնտեսական մտքի պատմաբան, իրավաբան: Նա ուսանել է Վիեննայի համալսարանում ավստրիական դպրոցի հիմնադիրներ Ֆրիդրիխ ֆոն Վիգերի, Օյգեն ֆոն Բեմ-Բավերկի, Բեռլինում՝ Գուստավ ֆոն Շմոլլերի մոտ, այնուհետև՝ կրթությունը շարունակել Լոնդոնում: Յ. Շումպետերի տեսական հայացքներին նվիրված գրականության մեջ իրարամերժ կարծիքներ կան, թե որքան մեծ է այս հեղինակների ազդեցությունը նրա տնտեսագիտական ու քաղաքական հայացքների ձևավորման վրա: Բ. Սելիգմենը համարում է, որ Շումպետերը նրանց ուղղակի հետևորդն է: Միաժամանակ, նշում է, որ հետագայում նրանք լուրջ տարածայնություններ ունեին առանցքային հարցերի շուրջ¹: Այնուամենայնիվ, բավական մեծ է ավստրիական դպրոցի ազդեցությունը Շումպետերի տնտեսագիտական և քաղաքական հայացքների ձևավորման վրա:

Նրա բարդ կենսագրությունն իր հետքն է թողել նաև գիտական հայացքների ձևավորման վրա: Ծանր մանկությունից հետո, խորթ հոր շնորհիվ, որը բարձրաստիճան գինվորական և ավստրիական արիստոկրատիայի ներկայացուցիչ էր, նրան հնարավորություն է ընձեռվում ստանալու տվյալ ժամանակի համար լավագույն կրթությունը: Ավարտելով դպրոցը՝ Շումպետերը կատարելապես տիրապետում է 5 լեզվի՝ հին հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն ու իտալերեն, ինչը հետագայում նրան շատ է օգնում: Ընդունվելով Վիեննայի համալսարան՝ Շումպետերը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում իրավագիտության, տնտեսագիտության, քաղաքականության, փիլիսոփայության, անգամ՝

¹ Селигмен Б., Основные течения современной экономической мысли, М., «Прогресс», 1968, с. 471.

Ֆիզիկայի հանդեպ: Ուսումնասիրում է Կ. Մարքսի, Է. Մախի, Ջ. Միլլի և այլոց աշխատությունները, ինչի արդյունքում արտահայտում է յուրօրինակ, հաճախ հակասական կարծիքներ, քննադատություններ, տեսակետներ: Կարճ ժամանակ աշխատելով որպես իրավաբան Եգիպտոսում՝ 1909 թ. վերադառնում է և դասավանդում Չերնովցիի, այնուհետև Գրացի համալսարանում, 1913-1914 թթ.¹ Կոլումբիայի համալսարանում (ԱՄՆ):

Մեծ է Բեմ-Բավերկի դերը Շումպետերի աշխատանքային գործունեության վրա: 1908 թ. Լեյպցիգում լույս է տեսնում նրա առաջին խոշոր աշխատությունը՝ «Տեսական քաղաքատնտեսության էությունն ու հիմնական բովանդակությունը»: Հատկանշական է, որ վերջինս երկար ժամանակ առանձնապես մեծ ուշադրության չի արժանանում գիտական աշխարհում՝ հայտնի լինելով միայն Շումպետերի գործունեությանը հետևող տեսաբանների նեղ շրջանակներում: Նման սառը ընդունելության պատճառն այն էր, որ այդ ժամանակաշրջանում պատմական և ավստրիական դպրոցների միջև ընթանում էին լարված քննարկումներ, որոնք հայտնի էին «մեթոդների պայքար» անունով, ինչի հետևանքով պետական մակարդակով արգելվում է ավստրիական դպրոցի ներկայացուցիչներին համալսարաններում դասավանդել:

Շումպետերն իր աշխատություններում քննարկում է ինչպես մարժինալիստների տեսական հայացքները, այնպես էլ մաթեմատիկական մոտեցումների կիրառումը տնտեսագիտական վերլուծություններում, որին դյուրահավատորեն էին վերաբերվում ավստրիական դպրոցի ներկայացուցիչները, արտահայտում է սուր քննադատական տեսակետներ: Դա էր պատճառը, որ նրան չէին ընդունում համալսարան՝ դասավանդելու, և միայն Բեմ-Բավերկի միջամտությունից հետո է ստանում այդ աշխատանքը¹:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Շումպետերն ուներ վառ արտահայտված հակազերմանական կողմնորոշում, ինչի հետևանքով լուրջ տարածայնություններ են ծագում համալսարանի դասախոսական կազմի՝ հատկապես ազգայնական սոցիալ-դեմոկրատների հետ:

Վարելով տարբեր պաշտոններ (Գրացի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկանից մինչև Ավստրիայի ֆինանսների նախարար և բանկի նախագահ)²՝ 30-ականներին՝ կյանքի վերջին շրջանում, նա վերջնականապես տեղափոխվում է ԱՄՆ և աշխատում Հարվարդի համալսարանում որպես պրոֆեսոր:

Յ. Շումպետերի երկրորդ՝ «Տնտեսական զարգացման տեսությունները», աշխատությունը ավելի մեծ ճանաչում է գտնում գիտական շրջանակներում՝ լույս տեսնելով 1912 թ. գերմաներենով: Այնուհետև 1926 թ-ին դա վերահրատարակվում է բարելավված, լրացված տարբերակով, իսկ 1934 թ-ին՝ թարգմանվում անգլերեն, 1937 թ-ին՝ ճապոներեն, հետագայում՝ բազմաթիվ այլ լեզուներով: Տարիներ անց իր իսկ աշխատության մասին Շումպետերն ասում է, որ այդ գիրքն իր մտքերի արտահայտման տեսանկյունից ունի այն նույն նշանակությունը, ինչ Քեյնսի համար «Ընդհանուր տեսություն զբաղվածության, տուկոսի ու փողի մասին» աշխատությունը²:

¹ Այդ տարիներին Բեմ-Բավերկը Ավստրիայի Գիտությունների ակադեմիայի նախագահն էր:

² American Economic Review, Vol. XL, September 1950, №4.

1918 թ. հրատարակվեց Շումպետերի բացառիկ աշխատություններից մեկը՝ «Հարկային համակարգի ճգնաժամը», որտեղ նա շարադրեց իր տեսակետներն ու առաջարկները կապիտալի հիմնադրամների հարկման, առևտրային հաշվեկշռի և արտասահմանյան վարկերի միջոցով հետպատերազմյան շրջանում տնտեսության վերականգնման և ֆինանսական կայունության ապահովման վերաբերյալ: Հատկանշական է, որ Շումպետերը դեռևս դարասկզբին իր աշխատություններում անդրադառնում է այնպիսի առանցքային հարցերի, ինչպիսիք են տնտեսության վրա պետության ազդեցության ձևերը և մեթոդները, որոնք 20-րդ դարի 60-70 թթ-ին քեյնսականների ու մոնետարիստների կողմից բանավեճի ու քննարկման առարկա էին:

Շումպետերի մյուս ուսումնասիրությունները, հոդվածներն ու հրապարակումները պակաս կարևոր և արժեքավոր չեն, սակայն «Տնտեսական զարգացման տեսությունները» աշխատությունն այն գլխավոր, հիմնականն է, որտեղ հեղինակը շարադրում է կապիտալիստական տնտեսության վերաբերյալ իր մտքերը, տեսակետներն ու մոտեցումները, այնուհետև դրանք զարգացնում իր հետագա գիտական գործունեության ընթացքում: Հարկ է նշել, որ գիրքը մեծ ճանաչում գտավ: Դրական կարծիքներին զուգահեռ, եղան նաև սուր քննադատություններ, այդ թվում՝ Վիգերի և Բեմ-Բավերկի կողմից:

Յ. Շումպետերը իր աշխատություններում անդրադառնում է այնպիսի խնդիրների, որոնք կապված են շուկայական տնտեսության զարգացման, տնտեսական աճի և տնտեսական զարգացման գործոնների հետ: Նրա կարծիքով՝ տնտեսական զարգացման շարժիչ ուժը ձեռներեցն է: Ձեռներեցի կազմակերպչական ունակությունների, կանխագագումների, ռիսկի դիմելու կարողության շնորհիվ տնտեսությունը զարգացման նոր խթան է ստանում: Տնտեսական գործունեության ընթացքում բազմաթիվ են արտաքին գործոնների ազդեցությունները, և որպեսզի ձեռներեցը հաղթահարի դրանք, նորամուծություններ է կիրառում: Շումպետերն առաջին անգամ կիրառում է «նորամուծություն», «նորարարություն» հասկացությունները, հիմնավորելով, որ դրանց արդյունքում ապահովվում է շահույթ, կանխորոշվում է տնտեսական համակարգի զարգացման աստիճանը:

Տնտեսական գործունեության ընթացքում նորարարություններն անհատների գործառույթներից են, որոնք Շումպետերը կոչում է ձեռներեցություն և դիտարկում որպես արտադրության չորրորդ գործոն: Ժ. Բ. Սեյի արտադրության գործոնների տեսության համաձայն՝ արտադրության գործոնները երեքն են՝ կապիտալ, աշխատանք ու հող: Ի տարբերություն Սեյի, ով կարծում էր, որ կապիտալից ստացվող գործոնային եկամուտը շահույթն է, Շումպետերը դիտարկում է արտադրության չորս գործոն և համապատասխանաբար՝ չորս գործանային եկամուտներ. աշխատանք - աշխատավարձ, հող - ռենտա, կապիտալ - տոկոս, ձեռներեցություն - շահույթ: Նա մերժում է Լ.Վալրասի տեսությունը՝ համաձայն որի ձեռներեցությունը առանձնահատուկ նշանակություն չունի:

Շումպետերը, տնտեսական զարգացման տեսության շրջանակներում, սահմանազատում է «տնտեսական աճ» և «տնտեսական զարգացում» հասկացությունները: Ըստ Շումպետերի՝ տնտեսական աճը ժամանակի ընթացքում միևնույն ապրանքների ու ծառայությունների արտադրության և սպառման աճն է: Տնտեսական զարգացումը պահանջում

է նոր՝ նախկինում անհայտ տեխնոլոգիաների, միջոցների, մեթոդների ստեղծումն ու կիրառումը, այլ կերպ ասած՝ ինովացիա կամ նորամուծություն:

Շումպետերի բնորոշմամբ՝ նորամուծությունը կարող է դրսևորվել հետևյալ դեպքերում.

1. նոր, կամ ավելի բարձր որակի ապրանքի արտադրություն,
2. արտադրության նոր տեխնոլոգիաների ու տեխնիկայի կիրառում,
3. սպառման նոր շուկաների գրավում,
4. արտադրության գործոնների, հումքի, ռեսուրսների նոր աղբյուրների բացահայտում ու օգտագործում,
5. կազմակերպման նոր ձևի, մոտեցման կիրառում:

Տնտեսական աճ ապահովող հասարակությունում ապրանքները և փողը շարժվում են միմյանց ընդառաջ: Շումպետերն այդպիսի շարժն անվանում է տնտեսական կյանքի շրջապտույտ և կարծում է, որ տնտեսական զարգացումը խախտում է այդ շրջապտույտը և կյանքի կոչում արտադրության նոր ճյուղեր, ոլորտներ, մինչդեռ հինը դադարում է գործել: Սակայն, տնտեսական զարգացումն անընդհատ բնույթ չի կրում, քանի որ հայտնագործություններն ամեն օր չեն կատարվում: Նորամուծությունները ու տնտեսական զարգացումն ընդհատվող բնույթ են կրում. դրանով էլ բացատրվում է տնտեսական պարբերաշրջանը:

Տնտեսական պարբերաշրջանի պատճառներից մեկն էլ, ըստ Շումպետերի, նորամուծություններով պայմանավորված ներդրումներն են հիմնական կապիտալում: 1939 թ. հրատարակված «Գործարար ակտիվության պարբերաշրջաններ» աշխատությունում, տնտեսական պարբերաշրջանի սեփական տեսությունից բացի, նա դասակարգում է տնտեսական պարբերաշրջանի տեսությունները (Կոնդրատևի «երկար ալիքների» (մինչև 55 տ.), Ժուգլյարի միջնաժամկետ արտադրական (մինչև 10 տ.) և Կիտչինի կարճաժամկետ դրամական (3-4 տ.) տեսություններ):

Ուսումնասիրությունների արդյունքում Շումպետերը հանգում է հակասական եզրահանգման. այն ամենը ինչը համարվում էր տնտեսությունն ապակայունացնող գործոններ՝ մենաշնորհ, տնտեսական պարբերաշրջան, մրցակցային պայքար, ազդեցության ոլորտների համար պայքար, ֆիրմայի սահմանափակումներ, իրականում տնտեսական զարգացման գործոններ են, որոնք արագացնում են այդ գործընթացը¹: Նա քննարկում է նաև ներդրումների և արտադրության ծախսերի կրճատման հարցերը:

Հետագա աշխատություններում նույնպես Շումպետերն անդրադառնում է այնպիսի հարցերի քննարկմանը, որոնք արդիական են նաև այսօր: Անհերքելի է նրա տնտեսագիտական հայացքների լրջությունն ու կարևորությունը:

¹ Базилевич В. Д. Неортодоксальная теория Й. А. Шумпетера // История экономических учений: У 2 ч., 3-е издание. К., Знания, 2006. Т. 2, с. 312-324.

ԳԱՅԱՆԷ ԽԱՆՈՒՄՅԱՆ

ԻՅՕԶԲ ԱԼՕԻԶ ՇՄՍԲԵՏԵՐ ԴԻՅՆԻ և ՆԱՍՏԻՆԱԿԱՆ ԴԵՅԱՏԵԼՆՈՒԹՅՈՒՆ

Կլյուչեւայե սլուայ: *աւստրիայե սկոլայ, Ի. Շւմպետեր, Փ. ֆոն Վիզեր, Օ. ֆոն Բեմ-Բաւերկ, Դ. ֆոն Շմոլլեր, էկոնոմիկոսկի ըոստ և էկոնոմիկոսկի ըւզւիտիե, Իննոուայիայ*

Իյոզեֆ Ալոիզ Շւմպետեր (1883-1950) ամերիկանսկի էկոնոմիստ աւստրիայե սկոլայի ըրիստոյնիայ, քոլիտոլոգ, սոցիոլոգ և Իստորիկ էկոնոմիկոսկի միսլի, յուրիստ. Սլիսկիայ Եւնսկոսկի ունիւերսիտետե ու ոսնոուքոլոյնիկոսկի աւստրիայե սկոլայի Փ. ֆոն Վիզերայ, Օ. ֆոն Բեմ-Բաւերկայ, Ե Բերլինե ու Դ. ֆոն Շմոլլերայ, ա շտեմ Ե Լոնդոնե. Մսե ըոստայ, ստայի և Իզդանիե Շւմպետերայ էնսնայ, ո ո ոնոգրայիայ “Թեորիայ էկոնոմիկոսկի ըւզւիտիայ” Ելայետայ Եոյ ցլայնայն Իզդանիեմ.

GAYANE KHANUMYAN

JOSEPH ALOIS SCHUMPETER LIFE AND SCIENTIFIC ACTIVITY

Key words: *Austrian school, J.Schumpeter, F.von Wieser, E.von Bohm-Bawerk, G.von Schmoller, economic growth, economic development, innovation*

Joseph Alois Schumpeter (1883-1950) known as an American economist of Austrian origin, political scientist, sociologist, historian of economic thought, lawyer. He studied at the university of Vienna at the founders of the Austrian school Friedrich von Wieser and Eugen von Bohm-Bawerk, in Berlin at Gustav von Schmoller and then in London. All works, articles and publications of Schumpeter are valuable, but the monograph “Theory of Economic Development” is its main publication.

ՍԵՂԱ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Հայցորդ, ՀՊՏՀ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԻԱՂԱՅՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ

Հիմնարկայեր. *Ելետրայկան ծառայոյթյոն, քաղաքացիայկան ծառայոյթ, մասնագիտրայկան և Ելաշտոնեալկան աճ, մասնագիտրայկան զարգացոմ, առաջխաղացոմ*

Հոդվածոմ վերլուծված է Ելետրայկան և քաղաքացիայկան ծառայոյթների մասնագիտրայկան և Ելաշտոնեալկան աճի կառուվարման արտասահմանյան փորձը: Պարզարանվոմ է ծառայոյթների մասնագիտրայկան և Ելաշտոնեալկան աճի հիմքոմ առկայետրայկան